ԱՆԽՈՆՋ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Դիլիջանում ամենքից սիրված ժողովրդական ուսուցչի՝ Ստեփանի դուստր Սերիկ Դավթյանը ծնվել է 1893 թ.։ Տեղի ծխական դպրոցում սովորելուց հետո նա ուսանել է Թիֆլիսի երրորդ իգական գիմնազիայում, 1913 թ. ավարտելով այն ոսկե մեդալով։ Թիֆլիսում ուսանելու տարիներին նա հայոց մշակույթի գործիչներից շատերի հետ է ծանոթացել։ Նվիրական, գուցե և բախտորոշ էր Հովհ. Թումանյանի հետ հաստատված ծանոթությունը։ Մեծահամբավ բանաստեղծի և տաղանդավոր գիմնազիստուհու միջև ստեղծվել է բարեկամություն, որի հիմքը եղել է սերը ժողովրդական ստեղծագործության նկատմամբ։ Օրիորդ Սերիկը, բանաստեղծի խնդրանքով, ժողովրդական հեքիաթներ է գրի առել և ուղարկել նրան. դրանցից մեկի մշակումն է «Մուկիկի մահը» իմաստուն ավանդությունը։

Վաղ տասակից Սերիկ Դավթյանի մեջ ի հայտ եկած և բանաստեղծի օրհնած այդ սերը պիտի ապրեր շատ տասնամյակներ, թափանցեր մանկավարժական, ապա հեղափոխական գործունեությամբ, իսկ այնուհետև՝ այլ դժվարություններով հագեցած տարիների միջով, որպեսզի 50-ական թվականներից ի վեր պսակվեր այնպիսի ինքնատիպ աշխատություններով, որոնք նրան դարձրին ժողովրդական արվեստի երևելի մասնագետ։

Ձեռագործի վարպետ, հմուտ ասեղնագործող կնոջը, բնականաբար, պետք է հրապուրեր ժողովրդական կիրառական արվեստի հենց այդ ասպարեզը՝ ասեղնագործությունը, կապերտները, գորգերը։ Եվ 60-ամյա Սերիկ Դավթյանն այդ գործին նվիրվեց այնպիսի եռանդով ու չթուլացող լարումով, որ կշարժեր ամեն մի երիտասարդ հետազոտողի նախանձը։ Ահա արդյունքը՝ երեք մեծարժեք ուսումնասիրություն. «Հայկական ժանյակ» (1966), «Հայկական ասեղնագործություն» (1972), «Հայկական կապերտ» (գտնվում է արտադրության մեջ)։

Այս ալբոմ-ուսումնասիրություններն ստեղծելու համար պետք էր ունենալ ոչ միայն եռանդ ու հետևողականություն՝ հանրապետության գրեթե բոլոր շրջաններում լինելու, աշխարհով մեկ սփռված հայկական գաղթօջախների հետ կապեր հաստատելու համար, այլև ազգային կիրառական արվեստի ոճի ու ավանդների իմացություն։ Հավաքել, վաղահաս կորստից փրկել ժողովրդական ստեղծագործության անհետացող նմուշները և ապա՝ քննախույզ հայացքով տարբերակել դրանք, պարզել դրանց ստեղծման եղանակները, անհնարին գաղտնիքները, ստեղծման վայրով ու ժամանակով պայմանավորված ոճական անկրկնելի յուրահատկությունները, կրած ու թողած ազդեցությունները։ Այդ գործը, թվում է, միայն Սերիկ Դավթյանը կարող էր անել։ Գործ, որի մասին Մարտիրոս Սարյանն է ասել. «Այսպիսով, նա լույս է սփռել կիրառական արվեստի հանիրավի մոռացված մի ասպարեզի վրա։ Դա գնահատության և խրախուսանքի արժանի գործ է, որ պետք է շարունակվի։ Կիրառական արվեստի բոլոր ճյուղերի դիտական ուսումնասիրության անգնահատելի գործը պետք է ավելի ու ավելի լայն ծավալ ստանա, իր մեջ առնելով ասպարեզը սիրող, հասկացող, գնահատող երիտասարդ մասնագետների։ Սերիկ Դավթյանի աշխատանքը նրանց համար լավ օրինակ կարող է լինել»։

Լ. Հ. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր